# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<<12 >> << հոկտեմբեր>> 2016 թ N 93
ք. Եղեգնաձոր

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ԹԱԳՈՒՀԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 96-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կանոնադրության 70-րդ կետով և հիմք ընդունելով Թագուհի Քոչարյանի հետ կնքած 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N175 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը, 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N 01/14/6152-16 ծանուցագիրը.*

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ**

*1. 2016 թվականի հոկտեմբերի 12-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Թագուհի Քոչարյանի հետ կնքած 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N175 աշխատանքային պայմանագիրը:*

*2. 2016 թվականի հոկտեմբերի 12-ից Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ուսումնական գծով տեղակալ Կարինե Հակոբյանի վրա, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:*

*3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել ընդունման-հանձնման աշխատանքները:*

*4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ